Ա. Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՎԿԱՅԱԳՐԵՐ ԱԿԱՆԱՎՈՐ ԼԵՆԻՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

(Ս. Սպանդարյանի ծննդյան 85-ամյակի առիթով)

Վերջին տարիների՝ 1958—1966 թթ. ընթացքում Սուրեն Սպանդարյանի վերաբերյալ հայտնի դարձան նոր վկայագրեր ու փաստաթղթեր, որոնք հարստացնում են ականավոր բոլշևիկի մասին դիտելիքները և ավելի ևս բարձրացնում նրան որպես Վ. Ի. Լենինի տաղանդավոր աշակերտի, մարտական զինակցի և պրոֆեսիոնալ հեղափոխականի։

1958 թ. Ի. Շվարցի վկայությամբ հաստատվեց, որ ՌՍԴԲԿ Պրագայի (VI) կոնֆերանսը նախապատրաստող Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովի (ՐՕԿ-ի) ծանուցումը դրել է Ս. Սպանդարյանը, որի հիման վրա այդ փաստաթուղթը զետեղվեց նրա՝ 1958 թ. Մոսկվայում և 1959 թ. Երևանում լույս տեսած ժողովածուներում[1]*։*

Ստոլիպինյան ռեակցիայի տարիներին (1907—1910 թթ.) ծանր վիճակ ապրեց կուսակցությունը։ Աջ և ձախ լիկվիդատորները (մենշևիկներն ու օտզովիստները) հուսալքված 1905—1907 թթ. հեղափոխության պարտությունից՝ բռնեցին բանվորական կուսակցությունը Ռուսաստանում լիկվիդացնելու գիծ։ Լիկվիդատորության չախչախման, բոլշևիկյան կուսակցության պահպանման ու ամրապնդման խնդիրը առաջնակարգ նշանակություն ստացավ։ Բոլշևիկները Լենինի գլխավորությամբ վճռական պայքար մղեցին լիկվիդատորության դեմ և եռանդուն աշխատանք տարան կուսակցության համառուսաստանյան կոնֆերանսի նախապատրաստման համար։ 1911 թ. ամռանը Վ. Ի. Լենինի կողմից Ռուսաստան ուղարկվեց Գ. Կ. Օրջոնիկիձեն, որի գլխավորությամբ Բաքվում և Թիֆլիսում կայացավ խոշորագույն կոմիտեների ներկայացուցիչների խորհրդակցություն։ Այստեղ ընտրվեց Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողով, որի կազմում մտան Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ի. Շվարցը և ուրիշներ։ Հանձնաժողովը կազմակերպչական և պրոպագանդիստական հսկայական աշխատանք տարավ Պրագայի կոնֆերանսի հրավիրման ուղղությամբ։ Կուսակցական կազմակերպություններին ուղղված վերոհիշյալ ծանուցման մեջ Ս. Սպանդարյանը գրել է. «Ծանրը ճգնաժամ է ապրում մեր կուսակցությունը. ահա արդեն երրորդ տարին է, ինչ չկան կենտրոնական կուսակցական հիմնարկներ. չկա տեղերում կուսակցական աշխատանքը միավորող և ուղղություն տվող օրգան, չկա կուսակցական բանվորական մասսայի հասարակական կարծիքը շատ թե քիչ ճիշտ և լրիվ արտացոլող բավականաչափ հեղինակավոր ու գործունակ կենտրոն»[2]*։ Ս. Սպան-*

---

[1] *Տե՛ս* С. С. Спандарян. Статьи, письма и документы. 1958, Москва, *էջ 269—272 և Սուրեն Սպանդարյան, հատոր երկրորդ, Երևան, 1959, էջ 258—261։*

[2] С. С. Спандарян. Статьи, письма и документы, 1958, стр. 269.

դարյանը միաժամանակ լավատեսորեն գրում է. «Հակառակ ոստիկանական բոլոր ծանր պայմաններին, չնայած սև ռեակցիայի ստոր պրովոկացիաներին և մոլեգնությանը, կենդանի է հեղափոխական ոգին Ռուսաստանի պրոլետարիատի մեջ, ուժեղ է բանվոր դասակարգի առաջավոր տարրերի սոցիալ-դեմոկրատական գիտակցությունը, ամուր է սերը դեպի անլեգալ պանծալի ՌՍԴԲԿ-ն»[3]։

Ս. Սպանդարյանի գրած կուսակցական այս կարևորագույն փաստաթուղթը Վ. Ի. Լենինի մեծագույն հավանությանը արժանացավ։ Այս առթիվ իր «Կուսակցական ճգնաժամի լուծումը» հոդվածում Լենինը գրել է. «Չորս տարվա փլուզումից ու տարրնթացությունից հետո, հակառակ ոստիկանության անբնակայելի հալածանքներին ու գոլոսականների[4], վպերյոդականների[5], հաշտվողականների, լեհերի ու tutti guati[6] «մեր ոտքի տակ քար գցելու» չտեսնված արարքներին, առաջին անգամ հավաքվեց ռուսական Ս.-Դ. կենտրոնը։ Առաջին անգամ Ռուսաստանում լույս տեսավ այդ կենտրոնի կողմից կուսակցությանն ուղղած մի թերթիկ»[7]։ Կուսակցական կազմակերպություններին կոչ անելով համախմբվել Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովի շուրջը, Վ. Ի. Լենինը եզրափակում է. «ՌՍԴԲԿ-ն ծանր հիվանդություն տարեց. ճգնաժամը վերջանում է»[8]։

1913 թ. մայիսին Թիֆլիսի դատաստանական պալատի էքսպերտը համեմատելով Ս. Սպանդարյանի ձեռագրերը «Հանուն կուսակցության» կոչի ձեռագիր տեքստի հետ (կոչը գրվել և տպագրվել էր Թիֆլիսում՝ 1912 թ. մարտին), հաստատեց, որ հիշյալ կոչի հեղինակը Սուրեն Սպանդարյանն է։ Հենց այս կոչն էլ կազմեց Ս. Սպանդարյանի նկատմամբ հարուցված գլխավոր մեղադրանքը, որի համար նա ցմահ աքսորի դատապարտվեց։

Հնագույն բոլշևիկ Ե. Դ. Ստասովան, որը 1907—1910 թթ. Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության քարտուղարն էր և որի միջոցով էին տպագրվում բոլշևիկյան փաստաթղթերը, «Заря Востока» թերթի 1926 թ. սեպտեմբերի 26-ի համարում տպագրված «Մի քանի խոսք ընկ. Ս. Սպանդարյանի նամակների և կոչերի պարզաբանման համար» խորագրով հոդվածում վկայեց, որ «Հանուն կուսակցության» կոչը գրել է Ս. Սպանդարյանը։ «Заря Востока» թերթի խմբագրությունը «Հանուն կուսակցության» կոչը հրապարակեց որպես Ս. Սպանդարյանի գրած։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի կուսպատը Ս. Սպանդարյանի 1927, 1939 և 1940 թթ. իր լույս ընծայած ժողովածուներում «Հանուն կուսակցության» կոչը զետեղեց որպես Ս. Սպանդարյանի գրած[9]։

Այսպիսով, բոլշևիկների հին սերունդը և մեր մտավորականությունը սկսած 1912 թ. մինչև 1946 թվականը համոզված էր, որ «Հանուն կուսակցության» կոչի հեղինակը Ս. Սպանդարյանն է։ Բայց ահա, 1946 թ. առանց որևէ

---

3 Նույն տեղում, էջ 271։
4 Մենշևիկներ.— Ա. Մ.։
5 Օտզովիստներ — Ա. Մ.։
6 Բոլոր և այլ նմաններ։
7 В. И. Ленин. Соч., т. 17, М., 1948, стр. 311.
8 Նույն տեղում, էջ 314։
9 Տե՛ս «Заря Востока», № 1286, 26 սեպտեմբերի 1926 թ.

բացատրության այդ կոչը զետեղվեց Ի. Վ. Ստալինի երկերի ժողովածուների 2-րդ հատորում, որպես նրա դրած[10]։

1963 թ. ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի դիրեկտոր ընկ. Ծ. Աղայանը այս կապակցությամբ հարցում արեց Ե. Դ. Ստասովային և ստացավ պատասխան, որի մեջ նա գրել է. «Հանուն կուսակցության» կոչի հեղինակության վերաբերյալ ձեր հարցումի առթիվ կարող եմ ասել, որ ինձ մոտ բացարձակապես չկա ոչ մի կասկած այն մասին, որ նրա հեղինակը Ս. Սպանդարյանն է։

Թե ինչո՞ւ և ո՞վ է կոչը զետեղել Ի. Վ. Ստալինի երկերի ժողովածուի մեջ, ես չգիտեմ, ինչպես և ոչինչ չեմ կարող ասել, ինչ հիմք են ունեցել կոչի հեղինակ լինելը վերագրել հենց Ստալինին»[11]։

Պրոֆ. Ծ. Պ. Աղայանը Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի և Երևանի ԲՈՒՀ-երի ՍՄԿԿ պատմության ամբիոնների միացյալ գիտական սեսիայում հրապարակելով Ե. Դ. Ստասովայի վերոհիշյալ պատասխան գրությունը, միանգամայն իրավացիորեն ասաց. «Այլևս ոչ մի կասկած չի մնում, որ «Հանուն կուսակցության» կոչի հեղինակը Սուրեն Սպանդարյանն է»[12]։

Կ. Տ. Սվերդլովան[13] և Գ. Ի. Պետրովսկին[14] վկայում են, որ 1915 թ. հուլիսին Մոնաստիրսկոյե գյուղում կայացած աքսորաբնակ բոլշևիկների ժողովի բանաձևը գրել են Յա. Մ. Սվերդլովը և Ս. Սպանդարյանը (մինչ այդ տարածված էր, որ Ստալինն է գրել)։ Բանաձևը նվիրված է IV Պետական դումայի բոլշևիկյան ֆրակցիայի վերաբերյալ դատական պրոցեսի վերլուծման և այնտեղ տրված է իմպերիալիստական պատերազմի նկատմամբ բոլշևիկյան կուսակցության վարած տակտիկայի խոր վերլուծությունը, բացահայտված է դատավարության պրոցեսում բոլշևիկ-դեպուտատների թույլ տված սխալները։ «Ամենագլխավորը,— ասված է բանաձևում,— նրանք չկարողացան 5 բանվոր դեպուտատների «դավաճանության» պրոցեսը վերածել պրոլետարական դեպուտատների կողմից կառավարության և լիբերյալ բուրժուազիայի ռուս ժողովրդին բացարձակ կերպով դավաճանելու պրոցեսի։ Նրանք չկարողացան նրանց երեսին շպրտել, որ դավաճաններ են հանդիսանում ոչ թե իրենք, բանվորների ընտրյալները, որոնք հոչակում են կռվող կողմերի բանվորների եղբայրություն ու համերաշխություն՝ հանուն իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու, հանուն ժողովրդի ազատագրման, այլ նրանք, որոնք միլիոնավոր բանվորների ու գյուղացիների սպանդի են տանում, իբր թե հայրենիքի

---

10 Տե՛ս «Սուրեն Սպանդարյան (հոդվածների ժողովածու)», Երևան, 1927, էջ 75—78, Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1939, էջ 306—312, С. Спандарян, Статьи, письма, документы, Ереван, 1940, стр. 280—285.

11 И. В. Сталин, Соч., т. 2, М., 1946, էջ 213—214։

12 Ս. Սպանդարյանի 1958 թ. Մոսկվայում լույս տեսած ժողովածուի առթիվ գրած դրախոսականում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 2—3, 1959, էջ 349—353) արտահայտել ենք այն կարծիքը, որ «Հանուն կուսակցության» կոչի հեղինակը Ի. Վ. Ստալինն է)։ Ե. Ստասովայի վերջին վկայագրից հետո այդ կարծիքը համարում ենք սխալ։

13 Տե՛ս «Октябрь» № 7, 1956, էջ 162 և Կ. Տ. Սվերդլովա, Յակով Միխայլովիչ Սվերդլով, Երևան, 1962, էջ 274։

14 Տե՛ս Я. М. Свердлов, Избранные произведения, т. 1, Москва, 1957, стр. 354.

պաշտպանության համար, իսկ իրականում՝ մի բուռ կալվածատերերի և կապիտալիստների շահերի համար»[15]։

Այս բանաձևը կուսակցական կարևորագույն փաստաթուղթ է, որն անմիջապես ուղարկվեց Վ. Ի. Լենինին և տեղական բոլշևիկյան կազմակերպություններին։ Նա զետեղված է նրա հեղինակներից մեկի՝ Յա. Մ. Սվերդլովի երկերի ժողովածուում[16]։ Բնական է, որ այդ բանաձևը պետք է զետեղվի նաև մյուս հեղինակի՝ Ս. Սպանդարյանի երկերի ժողովածուում, որը մինչև այժմ չի արվել։

1965 թ. առաջին անգամ հրապարակվեց լենինյան նոր փաստաթուղթ Ս. Սպանդարյանի մասին, որով ավելի քան պարզ դարձավ, թե համաշխարհային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդը որքան բարձր է գնահատել Սուրեն Սպանդարյանին։

1921 թ. հունիսին Ս. Սպանդարյանի հայրը՝ Սպանդար Սպանդարյանը Փարիզից դիմել է Վ. Ի. Լենինին՝ նրանից նյութական օգնություն խնդրել։ Այս կապակցությամբ Վ. Ի. Լենինը ՌԿ(բ)Կ Կենտրոնական քարտուղարությանն ուղարկած 1921 թ. հունիսի 11-ի թվակիր նամակում գրել է. «Ես և կուսակցության կենտրոնի բոլոր աշխատողները գիտենք Սուրեն Սպանդարյանին... Շատ արժեքավոր և ականավոր գործիչ էր։ Նրան պետք է իմանա Ստասովան— հավանական է նաև Կովկասի ընկերները (կարող է իմանալ Ենուկիձեն)։ Սուրենի հայրը 1910—1911 թթ. Սուրենի խնդրանքով մեզնից օգնություն է ստացել։

Ես առաջարկում եմ Կենտկոմի քարտուղարությանը.

1) նամակը տալ թարգմանության[17],

2) հարցում անել Ստասովային և Ենուկիձեին, Սուրենին և նրա հորն իմացող ուրիշ ընկերներին (եթե քարտուղարությունը կգտնի լրացուցիչ հարցման անհրաժեշտություն)՝ Թիֆլիս գործուղելու վերաբերյալ,

3) հանձնարարել Բոգացկուն (Կարմիր խաչ) Շվեյցարիայում կամ Կլիչկոյին Լոնդոնում՝ կապվել Սուրենի հոր հետ և օգնել նրան փողով, որպես ականավոր հեղափոխականի հոր»[18]։

Սպանդար Սպանդարյանի նամակի ռուսերեն թարգմանության տեքստի վրա մակագրված է. «Ուղարկված է 200 ռուբլի ոսկով»[19]։ Նա դրամական օգնություն ստացավ և՛ Մոսկվայից, և՛ Կարմիր խաչի Շվեյցարիայի ու Լոնդոնի բաժանմունքներից։

Ընդունված է այն փաստը, որ Ս. Սպանդարյանը միայն Պրագայի կոնֆերանսի (1912 թ.) պատգամավոր ու մասնակից է, որ իբր թե նա առաջին անգամ այստեղ է անձամբ հանդիպել ու ծանոթացել Վ. Ի. Լենինի հետ. Ն. Կոլեսնիկովան վկայում է, որ Ս. Սպանդարյանը նաև ՌՍԴԲԿ III կոնֆերանսի պատգամավոր ու մասնակից է, որը կայացել է 1907 թ. հուլիսի 21—23-ին Ֆինլանդիայի Կոտկա քաղաքում[20], հետևապես առաջին անգամ այնտեղ է նա

15 Տե՛ս «Большевики в годы империалистической войны» 1914—февраль 1917. Сборник документов местных большевистских организаций, Москва, 1939, էջ 78—79։

16 Տե՛ս Я. М. Свердлов, Избранные произведения, т. 1, Москва, էջ 34—36։

17 Նամակը Սպանդար Սպանդարյանը գրել էր հայերեն։

18 В. И. Ленин, Соч., 5 изд., Москва, 1965, стр. 271—272.

19 Նույն տեղում, էջ 432։

20 ՌՍԴԲԿ III կոնֆերանսի մասին տե՛ս «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», Երևան, 1954, I մաս, էջ 215—225։

հանդիպել Վ. Ի. Լենինին (պրոֆ. Ա. Մնացականյանը վկայակոչելով Ռ. Քաթանյանին, գրում է, որ Սպանդարյանը 1907 թ. վերջին էլ գնացել է Ֆինլանդիա, մասնակցել է պրոֆմիությունների հարցի շուրջը հրավիրված խորհրդակցությանը, այնտեղ ես հանդիպել է Լենինին)[21]։ 1966 թ. լույս տեսած գրքում Ն. Կոլեսնիկովան գրում է. «1907 թվականի հունիսի վերջին նամակ ստացվեց, որով Բաքվի կոմիտեին առաջարկվում էր մի պատգամավոր ուղարկեն կոնֆերանսին, որը պետք է կայանար հուլիսի երկրորդ կեսին։ Օրակարգի մասին ոչինչ չէր ասվում, բայց մենք համոզված էինք, որ III Դումային մասնակցելու հարցը կքննվի։ Կոնֆերանսին պատգամավոր ընտրելու հարցը քննության դրվեց Բաքվի կոմիտեի նիստում։ Պատգամավոր ընտրվեց Տիմոֆեյը (Ս. Սպանդարյանը — Ա. Մ.)։ Նրան ներկայանալու տեղ էր նշանակված Մոսկվան, որտեղից նա պետք է ներկայանար այնտեղ, որտեղ կայանալու էր կոնֆերանսը։ Մանրամասնությունները մենք իմացանք միայն այն ժամանակ, երբ կոնֆերանսից Բաքու վերադարձավ Տիմոֆեյը։ Այդ նույն օրը, երբ վերադարձավ Տիմոֆեյը, ուշ երեկոյան հրավիրվեց Բաքվի կոմիտեի նիստ, որպեսզի լսի նրա հաղորդումը կոնֆերանսի արդյունքների մասին։ Կոնֆերանսի ուշադրության կենտրոնում դրված էր III Դումայի ընտրությունների հարցը։ Պատգամավորների մեծամասնությունը կողմնակից էր մասնակցելու III Դումայի ընտրություններին։ Այդ խմբի կողմից զեկուցեց Լենինը։ Փոքրամասնությունը, որին գլխավորում էր Բոգդանովը, կողմնակից էր բոյկոտին։ Տիմոֆեյը մանրամասն շարադրեց Լենինի տեսակետը Դումայի ամբիոնն օգտագործելու մասին ռեակցիայի տարիներին՝ մասսային մոբիլիզացնելու համար։ Նա շարադրեց նաև բոյկոտիստների տեսակետը, որոնք փաստորեն ոչ մի պրակտիկ ծրագիր չէին առաջ քաշում։

Բաքվի կոմիտեում հարց դրվեց կոնֆերանսից Տիմոֆեյի բերած բանաձևը[22] հրապարակել առանձին թռուցիկի ձևով և տանել բացատրական աշխատանք Դումայում բանվորների ընտրվելու նշանակության մասին»[23]։

Ն. Կոլեսնիկովան բերում է նաև Ս. Սպանդարյանի մասին Ստ. Շահումյանի հետևյալ խոսքերը. «Տիմոֆեյը փորձված կուսակցական կազմակերպիչ է, լավ հռետոր, տաղանդավոր ժուռնալիստ»[24]։ Ստ. Շահումյանի այս խոսքերը Ս. Սպանդարյանի մասին ևս կարևոր են, որովհետև հեղափոխական պայքարի այդ երկու անզուգական ընկերների փոխադարձ նամակագրությունից ոչ մեկը չի գտնվել, չնայած հայտնի է, որ նրանք նամակագրություն ունեցել են իրար հետ։ Ստ. Շահումյանի «Սեր Սուրենը»[25] հոդվածից բացի ուրիշ ասույթ Ս. Սպանդարյանի մասին չունենք։ Ինչպես և չունենք Ս. Սպանդարյանի ասույթներից ոչ մեկը Ստ. Շահումյանի մասին։

Ս. Սպանդարյանի մասին վերջերս իր կարծիքն է գրել Կ. Ե. Վորոշիլովը։ ՀԿԿ Կենտկոմի նախկին քարտուղար Ս. Թովմասյանը պատմեց, որ ընկ. Վորոշիլովը երբ Հայաստան եկավ, մի դրույցի ժամանակ շատ ջերմ և խորին ակնածանքով խոսեց Ս. Սպանդարյանի մասին։ Նա ասաց, որ Ս. Սպանդարյանը

21 Ա. Ն. Մնացականյան, Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, 1963, էջ 148։

22 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 13, Երևան, 1950, էջ 61—62։

23 Н. Н. Колесникова. По дорогам подполья. (Из воспоминаний). Баку, 1966, стр. 75—76.

24 Նույն տեղում, էջ 60։

25 Տե՛ս Ստ. Շահումյան, հ. 2, Երևան, 1957, էջ 386—387։

բացառիկ անձնավորություն էր։ Նրան սի անգամ հանդիպողը չի կարող մոռանալ իր ամբողջ կյանքի ընթացքում։ Նա իր փորձով, հարուստ գիտելիքներով, իր խելքով, ոգեշնչող տեմպերամենտով զարմանք և հիացմունք էր առաջացնում բոլորի մեջ։

Ես աշխատում եմ «Հիշողություններ և փաստաթղթեր Սուրեն Սպանդարյանի մասին» ժողովածուի վրա (որը հիմնականում պատրաստ է)։ Դիմեցի ընկ. Վորոշիլովին և խնդրեցի, որ նա էլ հիշյալ ժողովածուի համար իր հիշողությունները գրի Ս. Սպանդարյանի մասին և 1966 թ. հոկտեմբերին ստացա հետևյալ պատասխանը. «Սուրեն Սպանդարյանի մասին իմ հիշողությունները Ձեզ ուղարկելու Ձեր խնդրանքի կապակցությամբ կարող եմ միայն ընդհանուր գծերով հաղորդել, որ նա իսկական լենինյան էր, աղնիվ, կարգապահ և խիզախ հեղափոխական, անսահմանորեն նվիրված կուսակցության և ժողովրդի գործին։ Առանձին մանրամասնություններ Բաքվում նրա հետ հանդիպելու վերաբերյալ Արխանգելսկի աքսորից փախչելու ժամանակ (1908 թ.) հիշողության մեջ չի պահպանվել։ Չէ որ անցել է ավելի քան կես դար։

Ցանկանում եմ հաջողություն Սուրեն Սպանդարյանի մասին ժամանակակիցների հիշողությունների ժողովածու կազմելու Ձեր աշխատանքում և այդ կարևորագույն գրքի արագ լույս ընծայում»։

Ս. Սպանդարյանի մասին 1966 թվականին գրած հուշերում նոր տվյալներ է հաղորդում Օլգա Վյաչեսլավովնա Սպանդարյանը[26]. Առանձնապես հետաքրքիր են Ս. Սպանդարյանի մանկության և պատանեկության շրջանին վերաբերող տեղեկությունները, ինչպես և 1905—1907 թթ. հեղափոխության ու ռեակցիայի տարիների գործունեության վերաբերյալ փաստերը։

Հետաքրքիր է Սուրեն Սպանդարյանի վերջին տեսակցությունը երեխաների հետ Մետեխի բանտում։ «Աքսոր ուղարկվելուց առաջ,— գրում է Օլգա Վյաչեսլավովնան,— Սուրենին թույլատրվեց հրաժեշտի տեսակցություն իր ընտանիքի հետ... Տեսակցությունը թույլատրվեց բանտապետի կաբինետում... Երեխաները ուրախացրին հորը, նրանք մի քանի ամիս էր իրենց հորը չէին տեսել։ Ջորսամյա տղան՝ Սերյոժան բարձրացավ հոր ծնկներին, մնացած երեքը տեղավորվեցին հոր շուրջը և իրար ընդհատելով պատմեցին նրան իրենց երեխայական գործերի, իրենց թվանշանների մասին և այլն։

Սուրենը ուրախ պատասխանեց նրանց ռեպլիկներին։ Երբ առաջին աշխուժությունը վերջացավ, Սերյոժան խնդրեց հորը մի բան պատմել։ Սուրենը հաճույքով ասաց. «Ես ձեզ կպատմեմ Սպիտակակող կաչաղակի հեքիաթը։ Դուք բոլորը լսեք, եթե որևէ բան չեք հասկանա, տանը մամայից հարցրեք, նա ձեզ բոլորը կբացատրի։ Միայն թե լավ հիշեք այս հեքիաթը»։ Մեծերը խմբով բողոքեցին, թե մենք կիտենք այդ հեքիաթը։— Ոչ, այդ հեքիաթը դուք չգիտեք, նա առանձնահատուկ է»։

Սուրենը բռնեց փոքրիկ Սերյոժայի թաթիկը, մատը պտտեցրեց ափի մեջ և սկսեց ասել. «Սպիտակակող կաչաղակը կաշա եփեց, երեխաներին կերակրեց։ Սրան տվեց, սա օկտյաբրիստ է, սրան տվեց՝ սա կադետ է, սրան տվեց՝ սա

26 Օ. Վ. Սպանդարյան (հայրական ազգանունը Ադամովիչ, ծնվ. 1879 թ.) — Սուրեն Սպանդարյանի կինը։ ՍՄԿԿ անդամ է 1905 թ.։ Նախահեղափոխական շրջանում աշխատել է որպես ուսուցչուհի։ Տարել է կուսակցական և պետական պատասխանատու աշխատանքներ։ Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի և Լենինի շքանշաններով։ Այժմ անհատական բոշակառու է։ Բնակվում է Մոսկվայում։

Պուրիշկևիչն է, սրան տվեց՝ սա մենշևիկ է, իսկ սրան ոչինչ չտվեց, ասաց Սուրենը, որ բռնել էր մեծ մատը, սա բոլշևիկ է, ինքն իր համար ամեն ինչ ձեռք կբերի»... Երեխաները, իհարկե, այդ ժամանակ չհասկացան հեքիաթի իմաստը։ Բայց հեքիաթը լրիվ հասկացան, երբ ժամանակը եկավ և մինչև այժմ նրանք հիշում և հասկանում են այն։

Բանտապետին, իհարկե, հեքիաթը չէր կարող դուր գալ։ Բայց պետի ճաշակը Սուրենի ի՞նչ գործն էր։ Սուրենի համար կարևոր էր և շատ անհրաժեշտ, ասել իր վերջին խոսքը հրաժեշտի ժամանակ, տալ երեխաներին, այսպես ասած իր նակազը և նա այդ արեց այնքան արագ, ճարպիկ և մատչելի, որ բանտապետը նույնիսկ չկարողացավ նրան կանգնեցնել։ Խոսակցությունը նորից գնաց կենցաղային զանազան թեմաների շուրջը։ Երեխաները չէին կարող զգալ բաժանման բոպեների ամբողջ ողբերգությունը, իսկ մենք, այսինքն՝ ես և Սուրենը, չէինք ուզում ընդգծել նրա ողբերգությունը, որպեսզի չհուզենք երեխաներին, որպեսզի չզրկենք փոխադարձ կայտառությունից։ Երեխաների մոտ այդ տեսակցությունը հիշողության մեջ միշտ մնաց, որպես ուրախալի տեսակցություն, չնայած նա եղավ վերջինը»[27]։

Վերջին տարիներին՝ 1958—1960 թթ., գրած գրախոսությունում և հուշագրերում Ս. Սպանդարյանի մասին արժեքավոր նոր տվյալներ է հաղորդել հին բոլշևիկ Իուրեն Պավելի Քաթանյանը[28]։ Նա առաջին անգամ բացահայտում է Ս. Սպանդարյանին 1916 թ. Մոնաստիրսկոյե գյուղից Ենիսեյսկ քաղաք տեղափոխվել թույլատրելու և նրա վերաբերյալ ցարի 1916 թ. օգոստոսի 8-ի հրամանի շարժառիթները։

Ս. Սպանդարյանը սկզբից աքսորվեց Ենիսեյսկի նահանգի Կանսկ գավառի Պերովսկ գավառակի Իննոկենտիևսկ գյուղը, որտեղ նա հասավ 1913 թվականի նոյեմբերի 8-ին։ Այս գավառը ավելի հարավ էր, համեմատաբար տաք, պայմանները տանելի։ Այնտեղ ծավալված հեղափոխական գործունեության համար և պրովոկատոր Մալինովսկու մատնությամբ Ս. Սպանդարյանը 1914 թ. մայիսին ձերբակալվեց. այս անգամ աքսորվեց այդտեղից 1500 կիլոմետր դեպի հյուսիսային բևեռ՝ Տուրուխանյան երկրի Մոնաստիրսկոյե գյուղը, ուր հասավ 1914 թ. հուլիսի 25-ին, որտեղի սառնամանիքները սրտի ուժեղ արատ ունեցող Ս. Սպանդարյանի համար մահացու էին։ Այդտեղից նույն օրը կնոջն ուղարկած նամակում Ս. Սպանդարյանը գրել է. «Առաջվա աքսորում ես մի կերպ վաստակում էի, կյանքն էլ լժան էր և մի կերպ ծայրը ծայրին էի հասցնում։ Այստեղ ես թողնված եմ իմ բախտին և չգիտեմ ինչ անել, ինչպես վարվել... Շուտով կգա ձմեռը (այստեղ ամառը գիշերներ չեն լինում, արևը համարյա թե մայր չի մտնում, իսկ ձմեռը համատարած գիշեր է)»[29]։

Ս. Սպանդարյանը հենց սկզբից փորձեց մահվան այդ օղակից մի կերպ դուրս պրծնել, տեղափոխվել դեպի Սիբիրի հարավը, համեմատաբար տաք կլիմայով տեղ։ Նա 1914 թվականի օգոստոսին դիմեց Ենիսեյսկի նահանգապետին, խնդրելով իրեն փոխադրել նախկին աքսորավայրը, բայց կտրուկ մերժում

---

27 Վ. Սպանդարյանի գրած հիշողությունները և Կ. Ն. Վորոշիլովի պատասխան-նամակը գտնվում է սույն հոդվածի հեղինակի մոտ։

28 Ի. Պ. Քաթանյան (1880—1966) — ՍՄԿԿ անդամ 1903 թ.։ Ակտիվ հեղափոխական գործիչ, իրավաբան։ Տարել է կուսակցական, պետական և դիվանագիտական մի շարք պատասխանատու աշխատանքներ։ Վախճանվեց 1966 թ. հունիսի 30-ին, Մոսկվայում։

29 Մլի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 6, գ. 64։

ստացավ[30]։ 1915 թ. դեկտեմբերին, երբ նրա առողջությունը խիստ վատացավ, դիմեց Իրկուտսկի գեներալ-նահանգապետին, խնդրելով իրեն թույլատրել բուժվելու համար փոխադրվել նահանգի քաղաքներից մեկը, բայց նույնպես կտրուկ մերժում ստացավ[31]։ Բայց թե ինչո՞ւ այս մերժումներից հետո Ս. Սպանդարյանին թույլատրվեց տեղափոխվել Ենիսեյսկ քաղաքը, ինչո՞ւ արյունոտ Նիկոլայ II-ը, հրաման տվեց Ս. Սպանդարյանին հետագա աքսորից «ազատվելու» մասին, չէր բացատրվում, վաստերը հայտնի չէին։ Շատ հեղինակներ բացատրում էին այսպես. «Համոզված լինելով, որ Սպանդարյանի առողջական վիճակը անհույս է, ցարական կառավարությունը «մարդասիրական» ժեստ արեց, 1916 թ. օգոստոսի 8-ին որոշում ընդունելով ազատել նրան հետագա աքսորից»[32]։ Իսկ Գ. Հարությունյանը և Լ. Տեր-Մկրտչյանը իրենց «Ս. Սպանդարյանի կյանքն ու գործունեությունը» խորագրով գրքում (գիրք, որ լույս է տեսել Մոսկվայում ռուսերեն) գրել են. «Աքսորական բոլշևիկները առաջարկեցին Սպանդարյանին դիմել Պետրոգրադ՝ կառավարությանը, բուժման համար Ենիսեյսկ քաղաք տեղափոխվելու թույլատվություն ստանալու։ Սպանդարյանի դիմումի կապակցությամբ Պետրոգրադի իշխանության կարգադրությամբ Կրասնոյարսկից դատախազը Մոնաստիրսկոյե գյուղը եկավ նրա առողջական վիճակը պարզելու»[33]։ Եվ, ըստ այս հեղինակների, Ս. Սպանդարյանի առողջական վիճակը պարզելուց հետո, Պետրոգրադից նախ կարգադրվել է Ս. Սպանդարյանին թույլատրել փոխադրվելու Ենիսեյսկ քաղաքը, ապա նրան հաջորդել է ցարի օգոստոսի 8-ի հրամանը, որով նա ազատվել է «հետագա աքսորից»[34]։

Ռ. Քաթանյանը Գ. Հարությունյանի և Լ. Տեր-Մկրտչյանի վերոհիշյալ գրքի մասին գրած գրախոսականում[35] իրավացիորեն նկատում է, որ նման մեկնաբանությունները՝ նախ փաստերը չիմանալու հետևանք են, երկրորդ՝ նրանք կարող են ընթերցողների մեջ թյուրիմացության տեղիք տալ և ստվեր գցել անհողդողդ հեղափոխականի վրա։ Իրական փաստը, ասում է Ռ. Քաթանյանը, հետևյալն է. Սուրեն Սպանդարյանը Պետրոգրադ՝ կառավարությանը ոչ մի դիմում չի տվել։ Նա միայն դիմել է տեղական իշխանություններին, խնդրելով փոխել իր աքսորավայրը մի մեղմ կլիմայով տեղ։ Տեղական իշխանություններից մերժում ստանալուց հետո, նա 1916 թ. մարտին նույն խնդրով հեռագիր է ուղարկում IV Պետական դումայի անդամ Պապաջանովին, որի հետ նա անձնական ծանոթություն ուներ, և խնդրում է նրա միջնորդությունը այդ հարցում։

Իրավաբան Պապաջանովի (որը հայ խոշոր կապիտալիստ Մանթաշովի իրավախորհրդատուն էր և անձնապես մոտ էր իրավաբանության մինիստր Մակարովի հետ) միջնորդությամբ Մակարովը նախ կարգադրում է ստուգել Ս. Սպանդարյանի առողջությունը, ապա տեղեկություն ստանալուց հետո, կարգադրում է թույլատրել Ս. Սպանդարյանին տեղափոխվելու Ենիսեյսկ քաղաքը

30 Տե՛ս Красноярский краевой госархив. ф. 34. д. 15. л. 12.

31 Նույն տեղում, ֆ. 34, գ. 15, թ. 15։

32 Տե՛ս Վ. Ավետիսյան, Սուրեն Սպանդարյան, Երևան, 1957, էջ 297։

33 Г. Арутюнян и Л. Тер-Мкртчян, Жизнь и деятельность С. Спандаряна, Москва, 1958, стр. 62.

34 Նույն տեղում, էջ 64։

35 Տե՛ս „Вопросы истории КПСС", № 6, 1958, էջ 211—213, Ռ. Քաթանյանի „Недостатки одной книги" խորագրով գրախոսականը։

և հետո կազմում է Ս. Սպանդարյանի վերաբերյալ մի հրաման, որը ցարը ստորագրում է 1916 թ. օգոստոսի 8-ին[36]։

Իսկ ի՞նչ էր ասված ցարական սատրապի կազմած և «արյունոտ» Նիկոլայ 2-ի ստորագրած այդ հրամանում։ Այդ հրամանի բովանդակությունը շարադրված է Ենիսեյսկի նահանգային բանտային տեսչության Տուրուխանյան բաժանմունքի պրիստավին գրած 1916 թ. օգոստոսի 25-ին ուղարկած գրության մեջ, որը բերում ենք ռուսերեն տեքստով։

«Государь император, по всеподданнейшему в 8 день августа 1916 года всемилостивейше поволить соизволил, освободив лишенного права состояния Сурена Спандарова Спандарянца от дальнейшего пребывания в ссылке, представив ему ныне же право повсеместного в пределах Империи жительства, за исключением столиц и столичных губерний, с отдачей его на пять лет под надзор полиции и признанием, взамен лишения прав состояния, лишения ст. 43 Улож. О нак. всех особенных прав и преимуществ, однако без восстановления в правах по имуществу.

Об этом тюремная инспекция дает знать вашему высокоблагородию для отметки в документах Спандарянца»[37].

Ինչպես նկատում է ընթերցողը, այստեղ ոչ «ներում» կա և ոչ էլ «մարդասիրական» ժեստ։ Ցարական սատրապը և «արյունոտ» ցարը դեպի խիզախ հեղափոխականը մինչև նրա վերջին շունչը մնացին անողոք, ճանաչելով նրան, որպես ցարական կարգերի համար շատ վտանգավոր թշնամի։ Իսկ Ս. Սպանդարյանին աքսորի դաժան պայմանները ֆիզիկապես անճանաչվելու չափ փոխեցին, բայց նրա պողպատե կամքը մազաչափ անգամ չկարողացան սասանել։ Նա մինչև վերջը մնաց ցարական ռեժիմի սարսափը։ Երբ Ս. Սպանդարյանին թույլատրվեց տեղափոխվել Ենիսեյսկ, քաղաքի հետախուզական բաժնի պետ Ռուսսիանովը տագնապով նահանգական ժանդարմական վարչության պետին գրեց հետևյալը՝ «...Սուրեն Սպանդարով Սպանդարյանցին թույլատրված է ապրելու Ենիսեյսկ քաղաքում։ Սպանդարյանցը հայտնի է աքսորական լայն մասսաներին, որպես ականավոր հեղափոխական գործիչ, աշխույժ նամակագրություն ունի աքսորված դեպուտատների հետ, նրանց միջոցով դրամական օգնություն է ստանում, և այժմ, Ենիսեյսկ գալով, անպայման աքսորված դեպուտատների հետ համագործակցած հեղափոխական գործունեություն կծավալի։

Նկատի ունենալով վերը շարադրածը... միջնորդում եմ Սպանդարյանցին Ենիսեյսկ քաղաքի փոխարեն տեղավորել Ենիսեյսկի գավառի ավելի քիչ բնակչություն ունեցող բնակավայրերից մեկում»։

Ցարական կառավարությունը սարսափեց Սուրեն Սպանդարյանի անշունչ դիակից անգամ։ Վախենալով, որ ականավոր հեղափոխականի թաղման թափորը կարող է հակակառավարական ցույցի վերածվել (նա վախճանվեց 1916 թ. սեպտեմբերի 11(24)-ին Կրասնոյարսկում), նրա թաղման թափորին ուղեկցեցին զինված ժանդարմներ։

---

36 Տե՛ս Ռ. Քաթանյանի հիշյալ դրախոսականը։

37 Красноярский краевой госархив. ф. 34. д. 15. л. 21

38 Նույն տեղում, ф. 4. д. 1921. л. 787.

Ռ. Քաթանյանի հուշագրերը, ինչպես Ս. Սպանդարյանի դատավարությանի[39], այնպես էլ նրա կյանքի վերջին շրջանի վերաբերյալ, վերը մատնանշված վկայագրերի ու փաստաթղթերի հետ միասին հարստացնում են Սպանդարյանի կենսագրությունը, ավելի են բարձրացնում նրան, որպես ականավոր լենինյանի։

* * *

Լրացավ մարդկության պատմության մեջ նոր դարագլուխ կազմող Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին, որի նախապատրաստման մեջ մեծ բաժին ունի Սուրեն Սպանդարյանը։

Կանգնած լինելով բարձր, տեսնելով շատ հեռուն, Սուրեն Սպանդարյանը խոր համոզմունքով ասաց. «Հեղափոխությունը կանգնած է 1917 թվականի շեմքին։ Կանգնեցեք Լենինի դրոշի տակ»[40]։ Սրանք եղան նրա վերջին խոսքերը։

---

39 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1960, էջ 139—148, Ռ. Քաթանյանի՝ «Суд над Спандаряном» հոդվածը։

40 «Комсомольский пропагандист и агитатор», № 13 (17), 1937. Վ. Շվեյցերի «Сурен Спандарян» հոդվածը։